

# Մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունել է SS ոլորտի մասնագետներին

09.08.2017

Օգոստոսի 9-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունել է Գավառ քաղաքում գործող «Luseen Technologies SS» զարգացման հիմնադրամի հիմնադիր և խորհրդի նախագահ Վարդադատ Ավետիսյանին և հիմնադրամի համահիմնադիր, տնօրեն, ավագ ծրագրավորող Արտակ Դոնոյանին:

Կարեն Բոթոյանը շնորհակալություն է հայտնել երիտասարդներին, Գեղարքունիքի մարզում իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար և հավելել, որ մարզի զարգացման գործում ինքն առանցքային տեղ է հատկացնում SS ոլորտին: Մարզի ղեկավարը տեղեկացրել է, որ արդեն իսկ կան մի շարք համայնքներում ոլորտի զարգացմանն ուղղված ուսումնական կենտրոններ բացելու ծրագրեր, որոնց գործարկումը լուրջ խթան կարող է հանդիսանալ նաև մարզի համայնքներում երիտասարդների համար աշխատատեղեր ստեղծելու հարցում:

Այնուհետև հյուրերը մարզպետին ներկայացրել են Գավառ քաղաքում հիմնադրամի գործունեության ընդլայնման համար անհրաժեշտ քայլերի շուրջ իրենց մոտեցումները, որն է՝ կենտրոնի հիման վրա տեխնոլոգիական հարթակի ստեղծում, և տարածաշրջանի SS համայնքի կենտրոնացում, ինչը կնպաստի միասնական գաղափարների մշակմանը և ներուժի օգտագործմանը, ինչպես նաև կդառնա գրավիչ բիզնես միջավայր արտաքին գործընկերների և ներդրողների համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ոլորտի զարգացման հետ կապված այլ հարցեր:

Կողմերը եկել են այն եզրահանգման, որ կա բավարար ներուժ՝ Գեղարքունիքի մարզը

Հայաստանի SS քարտեզում ավելի տեսանելի դարձնելու համար:

Մարզպետ Կարեն Բոթոյանը նշել է, որ պատրաստ է իր լիազորությունների շրջանակներում աջակցել մարզում նմանատիպ ծրագրերի կյանքի կոչմանը և հավաստիացրել, որ կարճ ժամանակում հնարավոր կլինի գրանցել դրական տեղաշարժ: